ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 դեկտեմբերի 2012 թ. N 9-Ա/1

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի ԹԻՎ 08-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ <<ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի օգոստոսի 22-ի N 1405-Ն որոշման 5-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2003 թվականի փետրվարի 3-ի <<<<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի կազմերը հաստատելու մասին>> թիվ 08-Ա/1 հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրությունը /այսուհետ՝ կանոնադրություն/ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել՝ <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

3.Կազմակերպության տնօրենին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի
_____ 2012 թվականի

Թիվ _____ - Ա հրամանով

Նախարար _____ Ա. Գրիգորյան

<<ԳՐԱՆՑՎԱԾ Է>>
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
Խորհրդային տարածքային
բաժնում
գրանցման օրը 05.02.03թ.
գրանցման թիվ 28221004588
վկայականի թիվ 03 Ա-058391
թիվ 1.2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Նոր-Նորքի տարածքային
բաժնում
<<08>> 10. 2007թ.
Նոր Նորքի Տ/Բ պետ
Ա.Հովհաննիսյան

թիվ 2.2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Նոր-Նորքի տարածքային
բաժնում
<<15>> 02. 2011թ.
Նոր Նորքի Տ/Բ պետ
Ա.Հովհաննիսյան

թիվ 3.2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Նոր-Նորքի տարածքային
բաժնում
<< >> _____ 2012թ.
Նոր Նորքի Տ/Բ պետ
_____

<<ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
2012 թվականի հունվարի 31-ի
N 9 - Ա/հրամանի

<< Հավելված N1
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
2003 թվականի փետրվարի 3-ի
թիվ 08-Ա/1 հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
<<ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.<<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 22-ի <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> N 1405-Ն որոշմամբ՝ <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> պետական հիմնարկի վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

2.Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, ինչպես նաև կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

3.Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

4.Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

5.Կազմակերպությունը պատասխանատու չէ իր հիմնադրի պարտավորությունների համար: Կազմակերպության հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների համար:

6.Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

7.Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8.Կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

9.Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10.Կազմակերպությունը, որպես ձեռնարկատիրական գործունեություն, կարող է իրականացնել. բնակչության մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն, աշխատանքային պայմանների ուսումնասիրություն, աշխատանքի կազմակերպման, նորմավորման և վարձատրության վերաբերյալ ծառայությունների մատուցում, հաշմանդամների բժշկասոցիալական, մասնագիտական ու հոգեբանական վերականգնման ծրագրերի մշակում, սոցիալ-իրավաբանական և հոգեբանական խորհրդատվական ծառայությունների մատուցում, կիրառական և սոցիոլոգիական հետազոտությունների անցկացում, գիտահետազոտական ծրագրերի մշակում և իրականացում, աշխատողների վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացում, մասնագիտական գրականության մշակում, կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ ուսուցման և վերապատրստման ծրագրերի մշակում և իրականացում, կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ ուսուցողական և տեղեկատվական սեմինարների, հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում և իրականացում, կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ ուսուցողական և տեղեկատվական նյութերի մշակում և հրատարակում, կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցում:

11.Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է բանկերում (այդ թվում՝ նաև օտարերկրյա) բացել հաշիվներ ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով: Բանկային հաշիվների գումարներին ավելացած տոկոսները պատկանում են Կազմակերպությանը:

12.Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ ԱՍՀԱԻ ՊՈԱԿ

ռուսերեն՝ <<Национальный институт труда и социальных исследований>> государственная неторговая организация.

ռուսերեն կրճատ՝ НИТСИ ГНТО

անգլերեն՝ <<National Institute of Labour and Social Researches>> state non-trade organization.

անգլերեն կրճատ՝ NILSR SNTO:

13.Կազմակերպության գտնվելու վայրն է քաղաք Երևան, Կ. Ուլնեցու 68:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14.Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է՝ աշխատանքի և սոցիալական ապահովության բնագավառում գիտահետազոտական գործունեության իրականացումը, սոցիալական ապահովության ոլորտի մասնագետների վերապատրաստումը, կենսաթոշակային բարեփոխումներին աջակցելը:

15.Կազմակերպությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.

1)աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացնում է գիտական կիրառական հետազոտություններ, փորձագիտական գնահատումներ և դրանց հիման վրա ներկայացնում համապատասխան առաջարկություններ, ինչպես նաև տրամադրում է մասնագիտական խորհրդատվություններ,

2)ուսումնասիրում է աշխատաշուկայի և աշխատանքային հարաբերությունների, աշխատանքի կազմակերպման, նորմավորման և արտադրողականության, աշխատանքի պայմանների ու դրանց պաշտպանության, աշխատանքի վարձատրության և մասնագիտական կողմնորոշման բնագավառների հիմնահարցերը,

3)ուսումնասիրում է աշխատանքի շուկայի պահանջները և մշակում բնակչության զբաղվածությունն ապահովող ծրագրեր, մշակում է զբաղմունքների և մասնագիտությունների անվանումներն ըստ կոդավորումների՝ միջազգային նորմատիվներին համապատասխան,

4)իրականացնում է բնակչության մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն,

5)ուսումնասիրում է բնակչության սոցիալ-տնտեսական և աշխատանքային միգրացիային վերաբերող հիմնահարցերը, իրականացնում կիրառական և սոցիոլոգիական հետազոտություններ,

6)ուսումնասիրում է ընտանիքի, կանանց, երեխաների, երիտասարդների, հաշմանդամների, տարեցների, կենսաթոշակառուների և փախստականների սոցիալական աջակցության հիմնախնդիրները և ներկայացնում առաջարկություններ,

7) իրականացնում է սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրեր,

8) աջակցում է կենսաթոշակային բարեփոխումներին, կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում մշակում և իրականացնում համապատասխան ծրագրեր ու մատուցում խորհրդատվական ծառայություններ.

9)մշակում է հաշմանդամների բժշկասոցիալական, մասնագիտական և հոգեբանական վերականգնմանն ուղղված ծրագրեր և իրականացում է հաշմանդամ ունեցող ընտանիքների և հաշմանդամների հետ աշխատող մասնագետների հետ սոցիալ-հոգեբանական խորհրդատվական և ուսուցման աշխատանքներ,

10) մշակում է տարեց բնակչությանը տրամադրվող սոցիալական աջակցության նոր ձևեր ու մեթոդներ,

11)իրականացնում է թափառաշրջիկ, մուրացիկ, վարքի շեղում ունեցող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրեր

12) ուսումնասիրում և վերլուծում է սոցիալ-տնտեսական դժվարություններ ունեցող կանանց, բազմազավակ ընտանիքների հիմնախնդիրները,

13)ուսումնասիրում է ազատազրկման վայրերում գտնվող անձանց հիմնախնդիրները,

14)կազմում է կադրերի վերապատրաստման և որոկավորման բարձրացման ուսումնական պլաններ և ծրագրեր, անցկացնում է սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ,

15)ուսումնասիրում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման հիմնահարցերը հանրապետությունում,

16)կազմակերպում է բուհերի, քոլեջների ուսանողների համար ուսումնաարտադրական պրակտիկա,

17)նախապատրաստում է նյութեր հրապարակումների, գիտաժողովների, խորհրդակցությունների անցկացման համար,

18)համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ,

19)ուսումնասիրում և վերլուծում է սոցիալական ոլորտում հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների համագործակցության արդյունքները,

20)կազմակերպում է հանրապետական, միջազգային գիտական և գիտագործնական սեմինարներ և գիտաժողովներ,պատրաստում գիտամեթոդական ձեռնարկներ

21)ուսումնասիրում է բնակչության աղքատության պատճառները և տալիս առաջարկություններ աղքատության նվազեցման վերաբերյալ,

22)ուսումնասիրում է ժողովրդագրական իրավիճակը և մշակում դրա բարելավմանն ուղղված ծրագրեր,

23)իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատում,

24)նախապատրաստում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվական նյութեր, կազմակերպում է դրանց տարածումը և իրականացնում է հասարակության իրազեկման աշխատանքներ

25) անհրաժեշտության դեպքում աջակցում է սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվող ծրագրերի և գնահատման աշխատանքներին՝ միայն գիտահետազոտական և վերլուծական մասով:

16.Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը (Հայաստանի Հանրապետություն)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, նրա լիազորած պետական մարմինը՝ ի դեմս Հայաստանի

Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ լիազորված պետական մարմին), գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրենի:

18.Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1)Կազմակերպության հիմնադրումը.

2)Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3)Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

4)Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծումը՝ բացառությամբ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

19. Լիազորված պետական մարմինը՝

1)հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ.

2)Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

3)իրականացնում է վերահսկողություն Կազմակերպության գործունեության նկատմամբ.

4)հիմնադրի անունից Կազմակերպության տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5)հաստատում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետության պատկանող գույքի կազմը.

6)նշանակում է Կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

7)կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

8)լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.

9)իրականացնում է վերահսկողություն Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

10)իրականացնում է վերահսկողություն Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ.

11) ստեղծում է հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան.

12) հաստատում է Կազմակերպության գործադիր մարմնի աշխատանքային գործառույթների նկարագրությունը / պաշտոնի անձնագիր/.

13)որոշում է կայացնում Կազմակերպության գործադիր մարմնի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և գործադիր մարմնի նկատմամբ

խրախուսման միջոցներ կիրառելու և կարգապահական տույժեր նշանակելու վերաբերյալ.

15)հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվապահական և ընթացիկ գործունեության մասին հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը.

16)ընդունում է որոշում Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին.

17) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Կազմակերպության գործադիր մարմինը տնօրենն է, որը՝

1)առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3)տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4)հաստատում է յուրաքանչյուր աշխատակցի համար պաշտոնի անձնագիր, որը ներառում է մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից աշխատողին ներկայացվող պահանջները, իրավունքներն ու պարտականությունները, շփումների շրջանակը, հաշվետվությունների համակարգը.

5)հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը.

6)հաստատում է Կազմակերպության կառուցվածքը.

7) հաստատում է գիտամեթոդական խորհրդի անհատական կազմը և դրա աշխատակարգը.

8)աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

9)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

10)կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

11)սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

12)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

13)ընդունում է որոշում Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մինչև 20 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված գործարքներ կատարելու մասին.

14)լիազորված պետական մարմին է ներկայացնում Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ՝

օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝ Կազմակերպության գործունեության բնագավառին, առարկային և նպատակներին համապատասխան.

15)սահմանում է Կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունները.

16) հաստատում է Կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ.

17)հաստատում է Կազմակերպության գործունեության տարեկան պլանը և դրա կատարման ժամկետները.

18)լիազորված պետական մարմին է ներկայացնում առաջարկություններ Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.

19)հաստատում է Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության սակագները.

20)իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

21.Տնօրենի բացակայության ժամանակ, նրա հրամանով (իսկ դրա անհնարինության դեպքում՝ լիազոր մարմնի որոշմամբ) տնօրենի լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը;

22.Կազմակերպության գործադիր մարմնի թեկնածուներն առաջադրվում են մրցութային կարգով:

23.Կազմակերպության կողմից իրականացվող գիտահետազոտական ու ուսումնամեթոդական աշխատանքների գիտական որակի բարձրացման, ինչպես նաև դրանց գործնական ներդրման պիտանելիության աստիճանի գնահատման նպատակով Կազմակերպությունում գործում է գիտամեթոդական խորհուրդ՝ որպես խորհրդակցական մարմին:

24.Գիտամեթոդական խորհուրդը կազմավորվում է Կազմակերպության, Հանրապետության բուհական և գիտական հաստատությունների բարձր որակավորում ունեցող մասնագետներով:

25. Գիտամեթոդական խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1)եզրակացություն է տալիս Կազմակերպության գիտական հիմնարար հետազոտությունների իրականացման ծրագրերին.

2)լսում է Կազմակերպության ստորաբաժանումների, ինչպես նաև առանձին աշխատողների կատարած գիտական աշխատանքների մասին հաշվետվությունները և հաղորդումները, ներկայացնում է համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ.

3)երաշխավորում է Կազմակերպությունում կատարված գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրապարակումը և դրանց գործնական կիրառելիությունը.

4)քննարկում է հիմնարար հետազոտությունների գծով Կազմակերպության հեռանկարային զարգացման ծրագրերը և ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.

5)աջակցում է գիտաժողովների, գիտական նստաշրջանների, սեմինարների կազմակերպմանը, կարող է երաշխավել Կազմակերպության աշխատակիցների մասնակցությունը այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող գիտաժողովներին.

6)կատարում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ պատրաստված գիտական ատենախոսությունների նախնական քննարկում, երաշխավորում դրանց ներկայացումը հրապարակային պաշտպանության.

7)հրատարակության է երաշխավորում աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ պատրաստված հոդվածներ, աշխատություններ, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր և այլ նյութեր:

26.Գիտամեթոդական խորհրդի աշխատանքները ղեկավարում է Կազմակերպության տնօրենը, նրա հանձնարարությամբ գիտամեթոդական խորհրդի նիստերը կարող է ղեկավարել նաև գիտամեթոդական խորհրդի անդամներից մեկը:

27.Գիտամեթոդական խորհրդի ընթացիկ գործունեության համակարգումն իրականացնում է գիտական քարտուղարը:

28.Գիտամեթոդական խորհրդի գործունեության կարգը սահմանվում է գիտամեթոդական խորհրդի աշխատակարգով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

29.Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

30.Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

31.Հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

32.Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

33.Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

34.Հիմնադրի որոշմամբ Կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

35.Հիմնադիրն իրավունք ունի ետ վերցնելու իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

36.Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու և հանձնելու անհատույց օգտագործման:

37.Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

38.Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

39.Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

40.Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

41.Կազմակերպության լուծարմամբ դադարում է Կազմակերպության գործունեությունը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

42.Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

43.Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

44.Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:>>: